ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2004)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

Տնտեսական աճ: 2004 թ. հունվար-մայիսին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 8.9%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 5.0 տոկոսային կետ), շինարարության (1.4) և արդյունաբերության (1.1) աճով:

ՀՆԱ դեֆլյատորը 2004 թ. հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 106.6%:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2004 թ. մայիսին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 1.1% աճ, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների «Բանջարեղեն և կարտոֆիլ» (11.8%), «Միրգ» (6.2%) և «Մսամթերք» (2.3%) ապրանքախմբերի գների աճով, որոնք ապահովել են գնաճի համապատասխանաբար 0.8, 0.2 և 0.2 տոկոսային կետերը:

2003 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գների աճը կազմել է 4.7%: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 2.37, բնականոն սղաճը՝ 2.07, իսկ պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագները՝ 0.26 տոկոսային կետերը:

Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 106.5%, ոչ պարենային ապրանքների գներինը՝ 100.3%, իսկ ծառայությունների սակագներինը՝ 101.0%:

2004 թ. հունվար-մայիսին, 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 107.7%, իսկ մայիսին, 2003 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 108.2%:

Արտաքին հատված: 2004 թ. հունվար-մայիսին ապրանքների արտահանումը (FOB գներով) կազմել է 274.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 8.0%-ով: Արտահանման աճը պայմանավորված է հիմնականում արտահանման մեջ շուրջ 14.6% կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 13.6% կազմող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 37.5% և 85.7% աճով:

Ներմուծումը (CIF գներով) կազմել է 511.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 7.6%-ով: Աճը պայմանավորված է հիմնականում ներմուծման մեջ շուրջ 8.5% կազմող «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբի ծավալի 54.1% աճով: Ավելացել են նաև ներմուծման մեջ մոտ 7.7% կազմող «Պատրաստի սննդի արտադրանք» և 7.0% կազմող «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալները համապատասխանաբար 25.4% և 58.6%-ով:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ցուցանիշների հաշվի առնելու արտահանումն ավելացել է 41.9%-ով, իսկ ներմուծումը՝ 16.0%-ով:

2004 թ. հունվար-մայիսին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 7.2%-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի ցուցանիշի՝ ավելացել 3.1%-ով) և կազմել 237.0 մլն ԱՄՆ դոլար:

2004 թ. հունվար-մայիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 561.0 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեքավորվելով 4.4%-ով: Մայիսին ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 552.7 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով 0.8%-ով: 2004 թ. հունվար-մայիսին եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 690.2 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 7.7%-ով: Մայիսին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 668.7 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով 1.0%-ով:

Պետական հատված: Մայիսին պետական բյուջեի եկամուտներն ու ծախսերը շեղվել են ծրագրված մակարդակից. բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 21.9 մլրդ դրամ (ծրագրված 20.6 մլրդ դրամի փոխարեն)՝ պայմանավորված եկամուտների գերակատարմամբ: Այսպես, հարկային եկա-

մուտները կազմել են 21.4 մլրդ դրամ (ծրագրված 20.3 մլրդ դրամի փոխարեն), իսկ ոչ հարկային ու կապիտալ եկամուտները՝ 0.5 մլրդ դրամ (ծրագրված 0.3 մլրդ դրամի փոխարեն): Մայիսին հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են 1.1 մլրդ դրամ՝ ապրիլի 1.0 մլրդ դրամի, առաջին եռամսյակի միջին 0.9 մլրդ դրամի և նախորդ տարվա մայիսի 0.9 մլրդ դրամի փոխարեն:

Հատկանշական է, որ տարեսկզբից հարկերի հավաքագրումն ընթացել է ավելի համաչափ, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Սակայն մայիսին դրսևորվել է ոչ համաչափ հավաքագրում. վերջին օրվա հարկային եկամուտները կազմել են ամսվա հարկերի 21.3%-ը՝ ապրիլի 12%-ի և առաջին եռամսյակում արձանագրված միջին մակարդակի 12.5%-ի փոխարեն: Նշենք, որ նախորդ տարվա առաջին չորս ամիսների վերջին օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա հարկերի միջին մակարդակի 33.8%-ը, իսկ մայիսին՝ 29.6%-ը:

Բյուջեի ծախսերը մայիսին կազմել են 22.2 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 20.0 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում, բյուջեի պակասուրդը կազմել է 0.2 մլրդ դրամ, որն ամսվա ընթացքում ձևավորվել է արժեթղթերի տեղաբաշխումից ստացված -0.4 մլրդ դրամ՝ զուտ մուտքերի, 4.6 մլրդ դրամ՝ արտաքին վարկի մարման և 5.2 մլրդ դրամ՝ միասնական հաշվի նվազման հաշվին:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության զուտ պարտավորությունները ամսվա ընթացքում աճել են 8.0 մլրդ դրամով:

Դրամավարկային քաղաքականություն: Մայիսին ակնկալվող ինքնավար հոսքերը հիմնականում պայմանավորելու էին ԶԱԱ-ի և ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պահանջի ցուցանիշների կառուցվածքային շարժերը, մասնավորապես՝ ԿԲ արտաքին պահուստների հաշվին սպասարկվելու էր Եվրամիության արտաքին պարտքը, որը հիմնական մասով չեզոքացվելու էր դրամաշնորհների (Եվրամիության և Պարենային ապահովության ծրագրի) ստացմամբ: Արդյունքում, նշված ցուցանիշների, հետևաբար և փողի բազայի գծով էական փոփոխություններ չէին դիտվելու, և դրանք պահպանելու էին նախորդ ամսվա վերջին ձևավորված մակարդակները:

Հաշվետու ամսում դրամավարկային քաղաքականության մի շարք ցուցանիշների շարժերում արձանագրվել են ծրագրված սցենարից որոշակի շեղումներ, մինչդեռ այդ պայմաններում ԿԲ-ն գրեթե ապահովել է փողի բազայի՝ ծրագրված շուրջ 104.0 մլրդ դրամ մակարդակը (նախորդ ամսվա համեմատությամբ 243 մլն դրամով նվազում): Ընդ որում, դա բավականին ցածր է տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից՝ 106.0 մլրդ դրամ, ինչը համահունչ է դրամավարկային քաղաքականության՝ երկրորդ եռամսյակի սկզբին ԿԲ կողմից հայտարարված եռամսյակային ուղղությունների ամսական բաշխվածությանը:

Մայիսին ևս, փողի բազայի աննշան փոփոխության պարագայում, առաջարկի տարրերի կառուցվածքում դիտվել են էական շարժեր: ՀՀ ԿԲ ԶԱԱ-ն նվազել են շուրջ 7.3 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 134.2 մլրդ դրամ՝ պայմանավորված հիմնականում 4.7 մլրդ դրամի չափով արտաքին պարտքի սպասարկմամբ, ԿԲ այլ հաճախորդների համար ավելի քան 2.5 մլրդ դրամին համարժեք արտարժույթի փոխարկմամբ և ներքաշող սվոփ գործիքի կնքմամբ: Ընդ որում, ծրագրվածի համեմատ նման մեծ շեղումը բացատրվում է նրանով, որ ամսվա ընթացքում չեն ստացվել նախատեսված դրամաշնորհները:

Նշված գործոններով է մեծապես պայմանավորվել նաև ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների, հետևաբար և ԿԲ ԶՆԱ ցուցանիշների աճը՝ համապատասխանաբար 8.0 մլրդ և 7.0 մլրդ դրամով: ՀՀ կառավարության պարտավորություններն աճել են հիմնականում Գանձապետարանի միասնական հաշվի միջոցներից արտաքին պարտքի սպասարկման արդյունքում (միասնական հաշվի մնացորդը նվազել է 5.3 մլրդ դրամով): Միևնույն ժամանակ, Կառավարության պարտավորություններն աճել են ԿԲ կողմից մայիսի 27-ին ՊՊ երկրորդային շուկայում մոտ 2.7 մլրդ դրամի արժեթղթերի ձեռքբերման հետևանքով: Նշված գործարքը հիմնավորվում էր նրանով, որ նախորդ շաբաթ բանկերի կողմից տնօրինվող իրացվելիության ավելցուկն իջել էր անհամեմատ ցածր մակարդակի՝ 1.6 մլրդ դրամ (անցած 4 ամիսների 3.9 մլրդ դրամ միջին մակարդակի պարագայում) և հաջորդ 15 օրվա ընթացքում ակնկալվում էր այդ մակարդակի պահպանում՝ պայմանավորված առավելապես սպասվող ինքնավար հոսքերի կանխիկ բնույթով: Իրականացված գործարքը համալրում էր նաև ԿԲ արժեթղթերի պորտֆելը:

ԿԲ ԶՆԱ-ի կառուցվածքում Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի աճը 1.6 մլրդ դրամով չեզոքացվել է ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշի նվազմամբ, ինչը պայմանավորված է ԿԲ պորտֆելում արժեթղթերի գումարի սահմաններում 924 մլն դրամի հակադարձ ռեպո համաձայնագրերի և զուտ 682 մլն դրամի սվոփ գործիքի կնքմամբ: Ընդ որում, նշված գործարքներն իրականացվել են ամսվա առաջին կեսին, երբ ավելցուկային իրացվելիության մակարդակը բավականին բարձր էր՝ 5.0 մլրդ դրամ: Այդ պայմաններում մայիսի առաջին շաբաթվա ընթացքում բանկերից ներգրավվել է 1.5

մլրդ դրամի ավանդ՝ 7 օր ժամկետով: Նշենք նաև, որ, չնայած իրացվելիության ավելցուկի նման տատանողականությանը և կարճաժամկետ խնդիրներին, միջին ամսական մակարդակը կազմել է 3.9 մլրդ դրամ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 1.6 մլրդ դրամով և կրելով ԿԲ կողմից կիրառված արժեթղթերի առքի գործառնության ազդեցությունը:

Փողի բազայի կառուցվածքում մայիսին 132 մլն դրամով աճել է ԿԲ-ից դուրս կանխիկը և 375 մլն դրամով նվազել են ԿԲ-ում բանկերի և այլ կազմակերպությունների հաշիվների միջոցները:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) մայիսին աճել է 2.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորվել է դրամային տարրերի, մասնավորապես՝ դրամային ավանդների փոփոխություններով: Դրանք ամսվա ընթացքում աճել են 2.0 մլրդ դրամով, որը գերակայող մասով (1.5 մլրդ դրամ) բաժին է ընկել ժամկետային ավանդներին: Դրամային ավանդների աճն ավելի քան 400 մլն դրամով չեզոքացվել է շրջանառությունում գտնվող կանխիկի նվազմամբ. արդյունքում դրամային զանգվածն ավելացել է 1.6 մլրդ դրամով: Արտարժութային ավանդներն աճել են 483 մլն դրամով, որի կառուցվածքում, ի տարբերություն դրամային ավանդների, աճը տեղի է ունեցել բացառապես ցպահանջ ավանդների ավելացման հաշվին՝ ժամկետային ավանդների 90 մլն դրամ նվազման պարագայում:

Շրջանառությունում եղած կանխիկի նվազման և ավանդների աճի հետևանքով 0.02 միավորով աճել են փողի և դրամային բազմարկիչները՝ մայիսի վերջին կազմելով համապատասխանաբար 2.19 և 1.18:

Ֆինանսական շուկայում մայիսին էական փոփոխություններ չեն արձանագրվել: ՊՊ առաջնային շուկայում տեղաբաշխված 9 - 12-ամսյա պարտատոմսերի եկամտաբերությունը պահպանվել է՝ կազմելով 5.8%, իսկ 1 տարուց ավելի ժամկետայնությամբ պարտատոմսերինը՝ նվազել ընդամենը 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 9.4%: Առաջնային շուկայի համեմատաբար կայուն միտումների ազդեցությամբ երկրորդային շուկայում ևս պահպանվել է որոշակի կայունություն, մասնավորապես՝ միջբանկային ռեպո գործարքների տոկոսադրույքը տատանվել է 4 - 5%-ի, իսկ ՊՊ եկամտաբերությունը՝ 6 - 8%-ի սահմաններում:

Ելնելով ֆինանսական շուկայի կայուն միտումներից՝ ՀՀ ԿԲ-ն անփոփոխ է թողել գործառնությունների տոկոսադրույքները. ռեպո համաձայնագրերինը՝ 6%, լոմբարդային վարկերինը՝ 20% և ավանդներինը՝ 1%:

Տնտեսությունից ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքները փոքր-ինչ նվազել են, ինչի արդյունքում դրանց միջին կշռված մեծությունը՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքն իջել է 1 տոկոսային կետով և սահմանվել 17%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվաճում	*2004 թ. հունվար – ապրիլ*	*2004 թ. հունվար-ապրիլի իրական աճի ինդեքսը 2003 թ. հունվար-ապրիլի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար – մայիս*	*2004 թ. հունվար – մայիսի իրական աճի ինդեքսը 2003 թ. հունվար – մայիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	311777.4	109.3	430835.9	108.9
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	107.4	-	106.6
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1,3]	282.9	109.0	389.4	108.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	155820.9	107.1	195223.3	103.3
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	2217.5	110.4	2717.0	113.5
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	52192.6	106.8	72969.7	106.5
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	207251.7	109.8	269648.0	110.2
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	26868.2	114.4	45650.4	115.1
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	332667.0	111.4 [1]	430463.3	109.2[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	346006.0	110.1 [1]	443671.0	109.0[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	37753.0	120.0 [1]	38047.0[4]	119.5[1,4]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1220.3		1224.4	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	118.3		118.0	-
Գործազրկության մակարդակը *(%)*	9.7	-	9.6	-

II. Արտաքին հատված

Ամվաճում	*2004 թ. հունվար-ապրիլ* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվար-ապրիլը 2003 թ. հունվար-ապրիլի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար–մայիս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվար-մայիսը 2003 թ. հունվար-մայիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	215.9	118.7	274.4	108.0
Ներմուծում *(ՍԻՖ)*	394.7	112.3	511.5	107.6
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	178.8	105.5	237.0	107.2

III. Գների ինդեքսներ

ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5	99.5 [5]	100.3	98.5
Փետրվար	99.4	108.6 [5]	97.9	101.0
Մարտ	100.3	101.9	102.4	97.2
Ապրիլ	101.2	96.1	99.8	99.8
Մայիս	101.1	102.1	99.9	99.6
2004 թ. հունվար – մայիսը 2003 թ. հունվար – մայիսի համեմատությամբ	107.7	126.2	102.4	99.5

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2002*	*2003*	*2004*	*2004*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.2	4.1	2.5	2.5
Փետրվար	-0.7	-1.5	-0.6	1.9
Մարտ	-0.6	-0.5	0.3	2.2
Ապրիլ	2.5	2.0	1.2	3.5
Մայիս	1.7	1.2	1.1	4.7
Հունիս	-0.5	1.4		
Հուլիս	-5.0	-5.5		
Օգոստոս	-3.0	-2.3		
Սեպտեմբեր	-0.6	2.5		
Հոկտեմբեր	0.5	-0.1		
Նոյեմբեր	2.2	2.2		
Դեկտեմբեր	3.6	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	8.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	1.1	4.7		

V. Սպառողական գների փոփոխությունները [1]

Ցուցանիշներ	*Բնականոն սղաճ*		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ [2]*
	գների փոփոխությունը	ցուցանիշի (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ցուցանիշի (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ցուցանիշի (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
Հունվար	0.6	0.4	20.1	2.09	-0.1	-0.01	2.5
Փետրվար	0.7	0.6	12.9	1.34	-0.1	-0.01	1.9
Մարտ	1.3	1.1	10.4	1.08	0.9	0.08	2.2
Ապրիլ	2.5	2.0	11.6	1.21	3.1	0.28	3.5
Մայիս	2.6	2.1	22.8	2.37	2.9	0.26	4.7


[1] ՀՀ ԿԲ հաշվարկներով:
[2] Նշված երեք ապաստումների գումարը պետք է հավասար լինի վերջին սյունակում ներկայացված սղաճի ցուցանիշին:
[3] Հաշվարկներում կիրառվել է ՀՀ ԱՎԾ կողմից 2001 թ. մարդահամարի արդյունքների հիման վրա վերանայված զբաղվածների թվաքանակի ցուցանիշը:
[4] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:
[5] Տվյալները ճշգրտվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն ՀՀ դրամ)

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2] փոփոխությունը	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ փոփոխությունը[2,3]
	Կենտրոնական բանկի կարճաժամկետ պարտատոմսերի գծով	Կենտրոնական բանկի երկարաժամկետ պարտատոմսերի գծով	Այլ արժեթղթերի գծով ներդրումներ	Ընդամենը	Կենտրոնական բանկում Կառավարության հաշիվների գծով ավանդներ դրամով	Կենտրոնական բանկում Կառավարության հաշիվների գծով ավանդներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցների դրամով	ՇԻԳ-երի միջոցների արտարժույթով	Ընդամենը		
2003											
Դեկտեմբեր	0	1047	0	1047	32357	156	41	0	32554	**-31507**	***-31800***
2004											
Հունվար	0	1047	0	1047	41597	156	3	0	41757	**-40710**	***-40804***
Փետրվար	0	1047	0	1047	42325	156	0	0	42481	**-41434**	***-41624***
Մարտ	0	0	0	0	35028	155	0	0	35184	**-35184**	***-35507***
Ապրիլ	0	1055	0	1055	37412	151	0	0	37563	**-36508**	***-36537***
Մայիս	0	3710	0	3710	32052	152	9	0	32212	**-28502**	***-28502***


[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ [1, 2]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ [4]	Ընդամենը
2003			
Դեկտեմբեր	12279	32554	44833
2004			
Հունվար	12107	41757	53864
Փետրվար	12452	42481	54933
Մարտ	13353	35184	48537
Ապրիլ	13608	37563	51171
Մայիս	13587	32212	45798



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի և ՕԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[4]	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***153802***	***151496***	***148209***	***145491***	***141524***	***134241***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-35216***	***-48377***	***-48226***	***-42062***	***-37434***	***-30394***
Կառավարություն	-31507	-40710	-41434	-35184	-36508	-28502
Բանկեր	8600	4375	3487	4344	6205	4599
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	-100	-3300	-2150	-3710	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	-1025	-1031	0	0	-924
Արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	-2032	-646	-2795	-3478
Զուտ այլ ակտիվներ	-12309	-12042	-10279	-11222	-7131	-6491
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***116654***	***105172***	***101742***	***103573***	***102790***	***103077***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***118586***	***103119***	***99983***	***103429***	***104090***	***103847***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	96838	83686	84225	84317	83499	83631
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	21047	18856	15243	18155	20088	19402
Այլ հաշիվներ	700	577	515	957	503	814
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	657	517	493	528	481	810
Այլ հաշիվներ (արտարժույթով)	43	60	21	429	22	4
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-2306***	***-3287***	***-2718***	***-3967***	***-7,283***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13161***	***151***	***6164***	***4628***	***7,040***
Կառավարություն	-	-9203	-724	6250	-1324	8,006
Բանկեր	-	-4225	-888	857	1861	-1,606
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3200	-1150	1560	-3710	0
Զուտ այլ ակտիվներ	-	267	1763	-943	4091	640
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-11482***	***-3430***	***1831***	***-783***	***288***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-15467***	***-3136***	***3446***	***661***	***-243***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13152	539	92	-818	132
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-2191	-3613	2912	1933	-686
Այլ հաշիվներ	-	-123	-62	442	-454	311
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-140	-24	35	-47	329
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	17	-39	408	-407	-18
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-1.5***	***-2.2***	***-1.8***	***-2.7***	***-5.1***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-37.4***	***0.3***	***12.8***	***11.0***	***18.8***
Կառավարություն	-	-29.2	-1.8	15.1	-3.8	21.9
Բանկեր	-	-49.1	-20.3	24.6	42.8	-25.9
Զուտ այլ ակտիվներ	-	2.2	14.6	-9.2	36.5	9.0
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***	***-3.3***	***1.8***	***-0.8***	***0.3***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-13.0***	***-3.0***	***3.4***	***0.6***	***-0.2***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.6	0.6	0.1	-1.0	0.2
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-10.4	-19.2	19.1	10.6	-3.4
Այլ հաշիվներ	-	-17.6	-10.7	85.8	-47.4	61.8

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջին:

[4] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[3]	Հ – 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**40586**	**43037**	**42114**	**43607**	**39074**	**42442**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97945	101612	107518	106957	93605	97325
Արտաքին պարտավոր. փոխարկելի արտարժույթով	-54608	-55919	-62767	-60710	-52144	-52058
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-2750	-2656	-2637	-2640	-2388	-2825
ԶՆԱ	**100535**	**98225**	**99613**	**102516**	**107348**	**106180**
Կառավարություն	16902	16184	16484	17318	17930	16387
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	16607	18601	15809	17876	17850	19201
Պահուստային ակտիվներ	25478	27360	24623	26750	26908	28321
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-8870	-8759	-8814	-8874	-9058	-9119
Տնտեսություն	103218	101543	106737	109837	115217	117277
Ձեռնարկություններ	61094	59714	62114	62528	64608	65074
Դրամով	22875	23017	23412	22192	22953	24122
Արտարժույթով	38183	36661	38666	40299	41623	40921
Արժեթղթեր	37	37	37	37	32	32
Տնային տնտեսություններ	35384	35916	38297	41222	43184	46330
Դրամով	7839	7836	8353	8731	9409	10362
Արտարժույթով	27544	28079	29944	32491	33775	35968
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35	33	25	34
Դրամով	12	13	14	9	12	25
Արտարժույթով	47	23	21	24	13	10
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254	6018	7398	5838
Դրամով	2145	1752	1874	2411	2627	1566
Արտարժույթով	4500	4090	4380	3607	4771	4273
Այլ ռեզիդենտներ[2]	37	37	37	36	1	1
Դրամով	0	0	0	0	0	0
Արտարժույթով	37	37	37	36	1	1
Ջուտ այլ ակտիվներ	-36193	-38103	-39417	-42515	-43650	-46686
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3028	2784	2799	2170	2224	1892
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	1974	12319	15827	12148	2170	3388
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժ.)	-412	-10571	-14553	-10828	-1047	-1971
Ներդրումներ փայաբաժիններում	514	501	501	456	458	458
Միջբանկային պահանջներ	3574	4793	4764	4541	5280	5040
Այլ ակտիվներ	26558	27114	26839	25608	26285	26764
Միջբանկային պարտավորություններ	-3544	-4654	-4660	-4491	-5232	-4818
Դրամական շուկայի գործիքներ	-562	-566	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ	-55148	-54195	-55428	-56376	-56873	-56862
Այլ պարտավորություններ	-12175	-15628	-15506	-15744	-16915	-20576
ԱՎԱՆԴՆԵՐ	**141121**	**141262**	**141727**	**146123**	**146421**	**148622**
Դրամով ավանդներ	40756	40476	38928	39744	41043	42743
Ցպահանջ ավանդներ	30618	26540	26298	26284	28080	28337
Ժամկետային ավանդներ	10138	13936	12629	13459	12963	14406
Ավանդներ արտարժույթով	100365	100785	102799	106379	105378	105879
Ցպահանջ ավանդներ	51034	48978	49878	54173	52273	52863
Ժամկետային ավանդներ	49331	51808	52922	52206	53105	53016

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[3] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[6]	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ – 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***194389***	***194533***	***190323***	***189098***	***180598***	***176683***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39429***	***26434***	***31603***	***37516***	***45493***	***51510***
Կառավարություն	-14605	-24525	-24950	-17866	-18577	-12115
Տնտեսություն	103257	101576	106777	109876	115261	117320
Չեռնարկ. և կազմակերպ.	61131	59751	62151	62564	64609	65075
որից՝ կուտակված տոկոսներ	455	497	478	531	539	596
Տնային տնտեսություններ	35422	35949	38337	41261	43229	46372
որից՝ կուտակված տոկոսներ	474	534	564	641	616	689
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35	33	25	34
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254	6018	7398	5838
որից՝ կուտակված տոկոսներ	71	43	58	60	67	59
Զուտ այլ ակտիվներ	-49223	-50617	-50224	-54494	-51191	-53695
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [3]	***133230***	***119963***	***118916***	***119620***	***120496***	***122117***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	***233198***	***220283***	***221244***	***225903***	***225358***	***227448***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [4]	***233818***	***220967***	***221926***	***226614***	***226091***	***228193***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	91997	79128	79685	79535	79166	78757
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	31275	27057	26791	26812	28561	29147
կուտակված տոկոսներ	17	16	28	22	26	39
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936	12629	13459	12963	14406
կուտակված տոկոսներ	163	142	163	164	168	154
Արտարժույթով ավանդներ	100408	100846	102820	106808	105400	105883
Ցպահանջ[5]	51076	49038	49899	54602	52296	52867
կուտակված տոկոսներ	5	6	12	7	9	15
Ժամկետային	49331	51808	52922	52206	53105	53016
կուտակված տոկոսներ	435	520	480	518	530	537
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***144***	***-4210***	***-1225***	***-8500***	***-3915***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-12995***	***5169***	***5913***	***7976***	***6017***
Կառավարություն	-	-9920	-425	7084	-711	6462
Տնտեսություն	-	-1681	5201	3099	5385	2059
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-1380	2400	413	2045	466
որից՝ կուտակված տոկոսներ	-	42	-19	53	8	57
Տնային տնտեսություններ	-	527	2388	2924	1968	3143
որից՝ կուտակված տոկոսներ	-	60	30	77	-25	73
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-24	0	-2	-8	9
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-804	413	-236	1380	-1560
որից՝ կուտակված տոկոսներ	-	-28	15	2	7	-8
Զուտ այլ ակտիվներ	**-**	-1394	393	-4270	3302	-2503
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ	**-**	***-13267***	***-1048***	***705***	***876***	***1621***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	**-**	***-12915***	***961***	***4659***	***-545***	***2090***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ	**-**	***-12851***	***959***	***4688***	***-523***	***2102***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-12869	557	-150	-369	-409
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-4218	-266	21	1749	586
կուտակված տոկոսներ	-	-1	12	-6	4	13
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798	-1307	830	-496	1443
կուտակված տոկոսներ	-	-21	21	2	4	-14
Արտարժույթով ավանդներ	-	438	1974	3988	-1408	483
Ցպահանջ	-	-2038	861	4703	-2307	572
կուտակված տոկոսներ	-	1	6	-5	2	6
Ժամկետային	-	2477	1114	-716	899	-89
կուտակված տոկոսներ	-	85	-40	38	12	7

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***0.1***	***-2.2***	***-0.6***	***-4.5***	***-2.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-33.0***	***19.6***	***18.7***	***21.3***	***13.2***
Կառավարություն	-	-67.9	-1.7	28.4	-4.0	34.8
Տնտեսություն	-	-1.6	5.1	2.9	4.9	1.8
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	- 2.3	4.0	0.7	3.3	0.7
Տնային տնտեսություններ	-	1.5	6.6	7.6	4.8	7.3
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-40.7	0.7	-6.4	-24.2	36.0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-12.1	7.1	-3.8	22.9	-21.1
Զուտ այլ ակտիվներ	-	-2.8	0.8	-8.5	6.1	-4.9
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.0***	***-0.9***	***0.6***	***0.7***	***1.3***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	-	***-5.5***	***0.4***	***2.1***	***-0.2***	***0.9***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.5***	***0.4***	***2.1***	***-0.2***	***0.9***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-14.0	0.7	-0.2	-0.5	-0.5
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-13.5	-1.0	0.1	6.5	2.1
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	37.5	-9.4	6.6	-3.7	11.1
Արտարժույթով ավանդներ	-	0.4	2.0	3.9	-1.3	0.5
Ցպահանջ	-	-4.0	1.8	9.4	-4.2	1.1
Ժամկետային	-	5.0	2.1	-1.4	1.7	-0.2

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ԶԱՀ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՀ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2003							
Դեկտեմբեր	91997	31258	123255	9975	133230	99967	233197
2004							
Հունվար	79128	27041	106169	13794	119963	100320	220283
Փետրվար	79685	26763	106449	12467	118916	102328	221244
Մարտ	79535	26790	106325	13295	119620	106283	225903
Ապրիլ	79166	28535	107701	12795	120496	104861	225358
Մայիս	78757	29108	107865	14252	122117	105331	227448

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,3]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2003							
Դեկտեմբեր	91997	31275	123272	10138	133410	100408	233818
2004							
Հունվար	79128	27057	106185	13936	120121	100846	220967
Փետրվար	79685	26791	106476	12629	119106	102820	221926
Մարտ	79535	26812	106347	13459	119806	106808	226614
Ապրիլ	79166	28561	107727	12963	120690	105400	226091
Մայիս	78757	29147	107904	14406	122310	105883	228193

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] Ավանդների մեջ ընդգրկված են կուտակված տոկոսները:


[4] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[5] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[6] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն ՀՀ դրամ
122500
120000
117500
115000
112500
110000
107500
105000
102500
100000
97500
05.01.04
09.01.04
14.01.04
19.01.04
22.01.04
27.01.04
31.01.04
04.02.04
09.02.04
12.02.04
17.02.04
20.02.04
25.02.04
01.03.04
04.03.04
10.03.04
15.03.04
18.03.04
23.03.04
26.03.04
30.03.04
02.04.04
07.04.04
12.04.04
15.04.04
20.04.04
23.04.04
28.04.04
03.05.04
06.05.04
11.05.04
14.05.04
19.05.04
24.05.04
27.05.04
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
01
02
03
04
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
250000
200000
150000
100000
50000
0
01
02
03
04
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ դրամով
Ժամկետային ավանդներ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
70
65
60
55
50
45
40
35
30
25
20
98
99
00
01
02
03
04


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
90
80
70
60
50
98
99
00
01
02
03
04


Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
01
02
03
04
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
15
10
5
0
-5
-10
-15
01
02
03
04
Փողի զանգված
Սղաճ


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2003					
Դեկտեմբեր	106262	81040	111270	122636	221576
2004					
Հունվար	103077	77843	104826	118884	219461
Փետրվար	102977	81912	110603	122571	227609
Մարտ	107632	81770	111460	123923	230579
Ապրիլ	107642	82574	112767	124901	235051
Մայիս	106484	81799	111088	124344	233803

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակնե



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները




Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	2003	2004				
	Դ [4]	Հ	Փ	Մ	Ա	Մ
Կենտրոնական բանկի ԶԱԱ	153802	151496	148209	145491	141524	134241
Առևտրային բանկերի ԶԱԱ	40586	43037	42114	43607	39074	42442
Ընդամենը	194389	194533	190323	189098	180598	176683
Կենտրոնական բանկի ԶԱԱ [3]	***154968***	***152768***	***149532***	***146520***	***142348***	***134901***



[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

[4] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	-651	-649	-656	-615	-662	-625
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97	82	90	141	100	110
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-748	-731	-746	-756	-762	-734
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-	-	-	-	-	-
ԶՆԱ	741	748	769	759	816	776
Կառավարություն	70	75	78	51	59	-41
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	282	407	396	351	496	570
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	282	417	396	352	497	572
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-	-9	-	-0.5	-1	-1
Տնտեսություն	2453	2354	2260	2039	2092	2152
Ձեռնարկություններ	1305	1190	1153	922	844	837
Դրամով	289	266	296	120	111	128
Արտարժույթով	1015	924	856	803	734	709
Արժեթղթեր	-	-	-	-	-	-
Տնային տնտեսություններ	1116	1132	1076	1085	1228	1296
Դրամով	676	688	595	552	664	685
Արտարժույթով	440	444	481	533	564	611
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	33	32	31	31	19	19
Դրամով	-	-	-	-	-	-
Արտարժույթով	33	32	31	31	19	19
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-	-	-	-	-
Դրամով	-	-	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-	-	-
Այլ ռեզիդենտներ	-	-	-	-	-	-
Դրամով	-	-	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-	-	-
Զուտ այլ ակտիվներ	- 2064	-2089	-1965	-1682	-1830	-1906
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	8	-	4	7	72	3
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-	-	-
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-	-	-
ՀՀ դրամ դրամարկղում	32	49	45	79	30	104
Ներդրումներ փայաբաժիններում	-	-	-	-	-	-
Պահանջներ վարկային կազմակերպություններին	-	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	520	508	513	520	597	596
Պարտավորություններ վարկային կազմակերպություններին	-	-	-	-	-	-
Դրամական շուկայի գործիքներ	-	-	-	-	-	-
Դրամաշնորհներ	-190	-11	-21	-16	-82	-77
Կապիտալ հաշիվներ	-2205	-2388	-2276	-2049	-2254	-2329
Այլ պարտավորություններ	-229	-247	-230	-223	-193	-203
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	91	99	113	144	155	151
Դրամով փոխառություններ	-	-	-	-	-	-
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	-	-	-	-	-	-
Արտարժույթով փոխառություններ	91	99	113	144	155	151
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	91	99	113	144	155	151

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ-03[3]	Հ-04	Փ-04	Մ-04	Ա - 04	Մ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***193738***	***193884***	***189666***	***188483***	***179936***	***176059***
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	153802	151496	148209	145491	141524	134241
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	40586	43037	42114	43607	39074	42442
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-651	-649	-656	-615	-662	-625
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39856***	***26716***	***31931***	***37845***	***45782***	***51610***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	**-14535**	**-24450**	**-24872**	**-17815**	**-18519**	**-12155**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-31507	-40710	-41434	-35184	-36508	-28502
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	16902	16184	16484	17318	17930	16387
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	70	75	78	51	59	-41
Պահանջներ տնտեսությանը	**105710**	**103922**	**109037**	**111914**	**117352**	**119470**
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	38	34	40	39	45	42
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	103218	101534	106737	109836	115216	117276
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	2453	2354	2260	2039	2092	2152
Այլ ակտիվներ (զուտ)	**-51318**	**-52756**	**-52234**	**-56254**	**-53051**	**-55705**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***233594***	***220600***	***221597***	***226328***	***225718***	***227669***
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	91965	79079	79640	79456	79136	78653
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	31080	26751	26555	26558	28373	28917
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936	12629	13459	12963	14306
Արտարժույթով ավանդներ	100321	100734	102660	106711	105092	105641
Վարկային կազմակերպությունների ներգրաված փոխառություններ	91	99	113	144	155	151
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**-**	***146***	***-4218***	***-1184***	***-8547***	***-3877***
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	**-**	-2306	-3287	-2718	-3967	-7283
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	**-**	2451	-923	1493	-4533	3369
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-	2	-8	42	-47	37
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-13141***	***5215***	***5914***	***7937***	***5828***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	-	**-9915**	**-422**	**7057**	**-704**	**6364**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-	-9202	-724	6250	-1324	8006
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	-	-718	300	834	613	-1544
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-	5	3	-27	8	-99
Պահանջներ տնտեսությանը	-	-1788	5116	2877	5438	2118
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	-	**-4**	6	0	5	-2
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	-	-1685	5204	3099	5379	2060
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	-	-99	-94	-221	53	60
Այլ ակտիվներ (զուտ)	-	**-1438**	**522**	**-4020**	**3203**	**2654**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	***-12995***	***997***	***4731***	***-609***	***1950***
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-12886	561	-184	-320	-483
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	-	-4329	-196	2	1815	545
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798	-1307	830	-497	1343
Արտարժույթով ավանդներ	-	413	1926	4051	-1619	549
Վարկային կազմակերպությունների ներգրաված փոխառություններ	-	8	14	31	11	-4

[1] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, իսկ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:
[3] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)


Անվանումը	2003 [3]	2004				
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	502.0	499.3	489.6	481.5	466.4	474.7
Համախառն միջազգային պահուստներ	510.2	507.7	498.0	489.9	475.4	484.0
Ոսկի	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	18.8	18.8	13.7	13.7	25.5	25.9
Արտարժույթ [2]	491.4	489.0	484.3	476.2	449.8	458.1
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [4]	***504.1***	***501.7***	***492.2***	***483.6***	***468.2***	***476.4***

[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2003 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառով 2003 թ. դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2003 թ. դեկտեմբեր, 2004 թ. հունվար, փետրվար և մարտ ամիսների «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:

[4] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2003[3]	2004				
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ
Վարկեր [1]						
Իրավաբանական անձանց						
ՀՀ դրամով	21.7	24.4	18.2	21.5	20.9	24.2
ԱՄՆ դոլարով	17.7	19.0	15.9	16.4	12.4	18.9
Ֆիզիկական անձանց						
ՀՀ դրամով	23.9	22.4	22.6	20.9	23.6	22.0
ԱՄՆ դոլարով	25.4	27.5	16.6	26.4	25.3	25.2
Ավանդներ [1]						
Իրավաբանական անձանցից						
ՀՀ դրամով	6.1	8.2	6.8	5.2	7.0	7.3
ԱՄՆ դոլարով	6.7	5.4	5.2	0.5	2.0	5.7
Ֆիզիկական անձանցից						
ՀՀ դրամով	6.5	8.6	3.9	5.7	5.6	7.8
ԱՄՆ դոլարով	6.1	5.2	4.3	5.9	5.8	5.9
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	7.0	7.0	7.0	6.0	6.0	6.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	3.5	3.5	3.5	3.0	1.0	1.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	9.7	7.5	6.4	5.9	5.8	5.8
Սղաճ	8.6	2.5	-0.6	0.3	1.2	1.1


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 03	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04
1	566.17	-	-	563.75	561.29	-
2	566.55	-	565.47	564.11	560.93	-
3	566.55	-	565.31	564.80	-	547.92
4	566.34	-	565.31	564.30	-	547.77
5	566.53	568.48	564.54	564.66	560.46	548.81
6	-	-	564.37	-	559.98	550.47
7	-	568.48	-	-	559.98	554.56
8	566.53	569.07	-	-	560.27	-
9	566.53	568.96	564.45	564.74	560.06	-
10	568.01	-	564.71	564.79	-	555.08
11	567.71	-	564.44	565.03	-	555.59
12	567.34	569.78	564.25	562.42	560.00	556.65
13	-	569.74	563.84	-	558.82	556.89
14	-	569.55	-	-	558.61	557.45
15	566.90	568.94	-	562.19	558.54	-
16	566.74	569.66	563.61	562.30	558.16	-
17	566.12	-	563.61	561.87	-	556.81
18	565.79	-	563.52	562.78	-	556.81
19	565.21	570.00	563.94	562.67	557.59	555.37
